Երաժշտ.՝ Էլմ.513

1. Լուսո բլրան վրա կանգնած,
Ով զինվոր Քրիստոսի,
Օն, ե՛լ, պայքարդ մղե հառաջ,
Զի օրն շուտ վախճանի:
Մեր թշնամվույն ճակտին մղենք
Մեր զորությունն ուժգին,
Հավատքն է հաղթություն, գիտենք,
Որ հաղթե աշխարհին:

Հավատքն է հաղթություն, (2)
Ո՜հ, փառավոր հաղթություն,
Որ հաղթե աշխարհին:

2. Իր սերն է դրոշ՝ վեր մեր գլխուն,
Մեր սուրն՝ Տիրոջ պատգամն,
Քայլենք ճամփան այն սուրբերուն,
Որ հոս պայքարեցան:
Ինչպես անոնք, նման մրրկի,
Թշնամվույն խոյացան,
Նույն հավատքով մենք ալ պիտի
Հասնինք ստույգ հաղթության:

3. Ան, որ հաղթող է թշնամվույն,
Ճերմակ զգեստ հագնի,
Ի մեջ սրբոց Իրեն անուն
Փառքով պիտ դավանի:
Ուստի, հառա՛ջ լուսո բլրեն,
Սրտեր՝ լեցուն սիրով,
Փախչին զորք խավարի ամեն
Հիսուսի անունով: